

Օրացոյց և գուշակ օդոց 1863 թուա-
կանին ֆրիստուսի, և Հայոց Ռեթի. —
Ճէ (107 երորդ) տարի. — **Ի Ս. Ղա-**
ղար:

Օրացոյց և գուշակութիւնք օդոց 1863
և այլն. — **Ի Տ. Երեմիայ քահանայէ**
Խասգիւղի. — **Ի Պօլիս. տպ. Յ. Միւ-**
հէնտիսեան:

Օրացոյց պատկերազարդ և գուշակու-
թիւնք օդոց 1863. — **Նորին հեղինա-**
կի. — **Ի Պօլիս. տպ. Ռ. Յ. Գիւրք-**
ճեան:

Օրացոյց Համազգային 1863 տարւոյն.
— **Պօլիս. տպ. Ա. Թահմիզեան:**

ԱՐԵՆԱԿԻՑ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՔ

Թէպէտ շատ փորձերով ապացուցուած է որ
արեւնակից ամուսնութիւնք պատճառ են բազմա-
տեսակ խօթութեանց և մասնաւորապէս խլահա-
մերց. բայց որպէս զի ցուցնենք թէ սխալ է ոմանց
այն կարծիքն, որք ժառանգական կը համարին այդ
տկարութիւնը, առնուիք դէպք մը որ Գաղղիոյ
մէջ հանդիպած ու գիտնոց շատոնց ծանօթ եղած
է, յորում ծնողք կարծուածն աւելի զօրաւոր
ու կատարեալ կազմուածոյ ենթակայ էին:

Հետեւեալ գիտողութիւնս եղած է 'ի Պրզանսոն
Պ. Բերրոն բժշկապետին խնամօքը, որ այսպէս կը
դրէ.

« Երկու եղբարքն Վալէ, լեռնաբնակք. բարձ-
րահասակ, զօրաւոր կազմուածք ունեցող և մինչև
ցայսօր կատարեալ առողջութեամբ ապրած էին:
Ամուսնացան երկուքն ալ իրենց հօրեղբօր գտե-
րացն հետ:

« Անդրանիկը դեռ լեռնաբնակ է, և շատ որդ-
ւոց տէր, որոնցմէ անդրանիկը միայն, այժմ
քսանամեայ, է խուլ և համր:

« Միւս եղբայրը՝ որ վեց տարի է շոգեկառաց
ծառայութեան մէջ է, ինչուան հիմա վեց զաւակ
ունեցաւ. որք ներկայապէս են,

« Ա. Դուստր երկոտասանամեայ, փափկա-
սնունդ, փոքրամարմին, կարգէ գուրս երկչոտ.
աղէկ կը լաէ և աղէկ կը խօսի:

« Բ. Դուստր տասնամեայ. ուժեղ, բարձրա-
հասակ. խուլ և համր. այժմ կը գտնուի Պրզան-
սոնի խլահամերց բարեգործական տունը:

« Գ. Մանուկ վաղամեակի. աղէկ կը լսէր և ա-
ղէկ կը խօսէր:

« Դ. Ուստր եօթնամեայ, մարմնեղ, բարձր և
ուժեղ. խուլ և համր:

« Ե. Դուստր քառամեայ. փոքրամարմին. խօ-
սակցութիւնը անկատար, բայց լաւ կը լաէ:

« Զ. Մանուկ եւամեայ. անզգայ կը լսուի ու
իցէ ձայնի ազդեցութեանն. սակայն դեռ չգիտ-
ցուի թէ արդեօք ասիկա ալ մէկալ դժբաղդ եղ-
բարցը կարգը պիտի անցնի թէ չէ:

« Ուրեմն այս գիտողութիւնս ապացոյց մը կըր-
նայ ըլլալ արեւնակից ամուսնութեան դժբաղդ
ծնած տղոց, և ոչ թէ ժառանգական ախտէ մը ինչ-
պէս կը համարին ոմանք »:

Անցեալ նոյեմբերի 23ին Գաղղիոյ Պէռի Սէն-
Քրիստֆի աւանէն չորս որսորդք աղուէս մը
տեսնելով՝ ետեւէն ընկան ինչուան Պէռնի-Ռիվիերի
մէկ քարահատքը. ներս մտան, աղուէսը չգտան
հոն. բայց մէջերնէն երկուքը մեծ զարմացմամբ
գտան սուտ դրամ կարողի գործարան մը. ուր
կային կաղապարներ, կապար, կանթեղ մը և սուտ
ստակներ, որ շատ հին կ'երևային: Մէկէն տեղ-
ւոյն ոստիկանութեանը իմաց տրուեցաւ որսոր-
դներէն, և երկու զինակիրք եկան քննելու:

Անհաւատալի նենգութեամբ նապաստակ մը՝
տասուերկու շներու խումբ մը կը փնջացնէ: Շատ
անգամ նապաստակը իր թշնամիներուն հալած-
մունքներէն ազատէր էր. բայց միշտ վտանգի մէջ
անգաղար յարձակմունքներէ՝ այնպիսի անհանգրու-
տութեամբ օրերը կ'անցընէր, որ մարտողութիւնը
տակնուվրայ ըլլալով, քունը աչուռնէրէն կտրե-
լով, առողջութիւնը զգալի կերպով կը պակսէր:
Վերջապէս յետին փորձ մ'ալ կը փորձէ. ինչուան
այն ատեն սրունքներուն վրայ էր իր ազատու-
թեան ճարը, բայց այս ապաւենն ալ կրնար տկա-
րանալ: Սկսուցեալ քարահատք մը կը ճանչնար,
որ անգունդ մ'էր. իր մեքենայած վրէժանդրու-
թեանը յարմար սեպեց այն տեղը: Երբ նորէն
հալածուեցաւ իր որջէն, հակառակորդներուն մո-
լեգին թափը կտարելու համար քանի մը շրջանը
նկէն վերը, յանկարծ գահաւանդին վրայ ցատ-
քեց. երբ եղբրքը հասաւ ճամբան փոխեց, և ապա-
հով ծակ մը մտաւ: Շուները անկասկած ետեւէն
վազելով մէկիկ մէկիկ վճին մէջ թափեցան: Քա-
րահատքին խորը աշխատող բանուորները՝ զար-
մանալով տեսան շներու կարկուտ մը ոտունընուն
կամ գլխընուն վրայ. շներէն ոմանք քիչ ատենէն
մեռան, ոմանք ծանր կամ թեթեւ վնասուած՝ թե-
պէտ դարմանուեցան, բայց բոլորովին չողջնցան.
խսկ նապաստակն աղէկ վիճակի մէջ է, և քանի
մը շաբաթ ալ դեռ կրնայ պառկիլ երկու երեսին
վրայ: